

Օւսհրատ միաբանելով իր իշխանա-
կցին հետ, որ էր Բրտաշիաս մեծ նա-
խարարը Սէրին Հայոց վերակացուն,
բոլորովին ապստամբեցան ի Սելէւկիա-
ցւոց, պատերազմով ալ յաղթեցին ա-
նոնց, և երկու թագաւորութիւն հաս-
տատեցին, Բրտաշիաս տիրեց Սէրին
Հայոց և աթուր դրաւ Բրտաշատ քա-
ղաքը, Օւսհրատ Օսոփաց մէջ տիրեց,
որ հիմկու Տիարպէքիրու սահմանները
կ'իյնայ. և քաջութեամբ երկուքն ալ
ընդարձակեցին սահմաններն, և հռով-
մայեցւոց հետ դաշինք դնելով բարե-
կամութեան՝ անվախ թագաւորեցին,
և թողուցին թագը իրենց զաւկներ-
նուն ինչուան Ս աղարշակայ ատեն. այն
քաջ Սորիւիւրիկէսն ալ որ Ս աղարշա-
կայ հետ կռուեցաւ և սպաննուեցաւ,
ինչպէս կը պատմէ Խորենացին¹, այս
Օւսհրատայ որդին կամ թոռն կը կար-
ծուի:

Բայ պատմութիւնը շատ ծանօթ է
Լւրտաւացւոց, որոնք Հայոց թագաւո-
րութեան սկիզբը վերցոյնէալ Բրտա-
շիասէն և Օւսհրատէն սկսած կը սե-
պեն. թէ որ մեզմէ մէկը ուզեր միայն
մեր ազգային պատմչաց հետեւելով հին
արեւմտեան աղբիւրները թողուլ՝ Օւ-
սհրատայ պատմութիւնն ալ իրեն հա-
մար տարակուսական բան մը պիտի ե-
րենար, թէ որ անոր թագաւորելէն
2000 տարի վերջը աս դրամը աշխար-
հիս մէկ ծայրէն դուրս չելեր, որ գրտ-
նուեցաւ 1818ին Ղաերմանիոյ Սայէն-
ցաւ քաղքին մօտ Ղիտերհինկէհայմ
գեղը գետնի տակ, ուր որ ատենօք մե-
ծըն Կարողոս Ղազգիոյ և Ղաերմանիոյ
կայսրը պալատ մը կանգնեց է եղեր Ը
դարուն վերջերը: Երբ և ինչ ճամբով
Վրիստոսէ 189 տարի առաջ Հայոց
վրայ իշխող թագաւորի մը դրամ, որ
ամենէն հին Հայոց դէմք մը և թերևս
Հայկայ արեւակցինը՝ մեղի կ'ընծայէ,
Հայաստանին փոշիէն ելեր և Ղաերմա-
նիոյ հողուն մէջ է ընկեր, մենք չենք
ուզեր քննել, գիտնալով որ դրամը աշ-

խարհիս ամենէն մեծ ճամբորդն է, և
ամէն արգելքի կը յաղթէ:

Կուխտոյ Սանտպէրկէր Ղաերմանա-
ցին առաջին անգամ աս դրամին վրայ
լատիներէն տեղեկութիւն մը հրատա-
րակեց հանդերձ պատկերովը, ուսկից
օրինակած է մերն ալ. և իր դրուած-
քէն օրինակ մը դրկեց մեր միաբանու-
թեանը ճեմարանին հանդերձ նամա-
կով, որուն մէջ ազնիւ բանասէրը պարտք
կը սեպէ ասանկ ցանկալի Հայկական
զիւտը հաղորդելու անոնց՝ որոնց ջանքը
յատուկ կերպով նուիրած է իրենց
Հայաստան հայրենեացը օգտին և փա-
ռացը. մենք ատենին հատուցած եմք
իրեն մեր շնորհակալութիւնը, այս ա-
ռիթս ալ կ'առնումք թէ նոյնը հրատա-
րակելու և թէ օրինակ ընծայելու ազ-
գայնոց և յորդոր այն բարեսիրութեա-
նը՝ որուն որ շատ փափաքելով յայտ-
ներ եմք Հայոց յիշատակարանաց վրայ
խօսիլ սկսած ատեննիս:

Հ. Ղ. Մ

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Վաւանա:

ՎԱԹԱՆ կամ Վատանա քաղաքը Սի-
կիլիոյ մէջ Լատնա լեռան հարաւային
կողմի ստորոտը կ'իյնայ, որ Վաքշա
կղզւոյն գաղթականները շինեցին Վը-
րիստոսէ 726 տարի առաջ, Սիրակու-
զայի հիմնադրութենէն եօթը տարի
վերջը: Հրաբուխին մօտ ըլլալով շատ
անգամ երկրաշարժէ կործանած է.
Պոմպէոս ալ Սիկիլիոյ պատերազմին
ժամանակը աս քաղաքս կործանեց, բայց
Ստրաբոնին ըսածին նայելով, () գոս-
տոս կայսրը նորէն նորոգեց. և հրա-
բուխին մօտ ըլլալով օտարականաց եր-
թեւեկութեամբ շատ ծաղկեցաւ, և
ատեն մը Լրագոնայի² թագաւորները

¹ Գիրք Բ. ք. Է:

¹ Հատ. 2. 154:

² Լրագոնա հիմա պզտի քաղաք մըն է, և հին ա.



Վաթնահա :

Հոս կը նստէին : 1693^{ին} եղած երկրա-
շարժով գրեթէ բոլոր քաղաքը կործա-
նեցաւ . 11,000 հոգի որ մայր եկեղե-
ցոյն մէջ ժողովուրդ էին՝ գրեթէ բոլորն
ալ աւերակին տակը մնացին . աս շար-
ժը այնչափ սաստիկ էր որ մինչև Մոսկ-
ովա , Վաղարշապատ , ու Վերմանիա կ'իմա-
ցուէր կ'ըսէին , 44 քաղաքէն աւելի կոր-
ծանեցան ու գրեթէ 100,000 հոգի
կորսուեցան . նոյնպէս 1783^{ին} ու 1819^{ին}
քաղաքին մեծ մասը կործանեցաւ :
Մոսկովայի կործանումներէն վերջն ալ,
դեռ քաղաքացիք անխոնջ աշխատութե-
ք օրէ օր քաղաքնին կը փառաւորեն . և
հիմայ գեղեցիկ դիրքովն ու շէնքե-
րովը Վաթնահայի հարաւային կողմի ա-
մենէն ազուրը քաղաքներէն մէկը կը
սեպուի : Վաղարշապատ մէջի նոր շինած
երկու երկայն փողոցները շատ գեղեցիկ
են . շէնքերը ընդհանրապէս բաւական
մեծագործ ու փառաւոր , որ Սիկի-
լիոյ քաղաքներուն մէջ քիչ կը գտնուի :
Հրապարակները լայն ու կանոնաւոր են՝
յատակնին ալ լայնա հրաբուխէն ելած
լաւայովը շինուած է : Մոսկովա մէջ ամե-
նէն ազուրն է համալսարանին առջևի-
նը ուր ամէն երկուշաբթի տօնավաճառ
կ'ընեն : Մը հրապարակը ութանկիւնի
է չորս կողմը ազուր շէնքերով պատած ,
մէջտեղն ալ մեծ փղի արձան մը : Շէն-
քերուն մէջ ամենէն գեղեցիկը կընայ
սեպուիլ մայր եկեղեցին , որ 1094^{ին} հի-
մնուած է . աւանդատանը պատերուն

տենի Ակրականգ քաղաքին հիւսիսային կողմը կ'իյ-
նայ , որ հիմա ճիւղաձիւղի կ'ըսուի : Ուրիշ է նոյն
անուամբ Սպանիայի գաւառը :

վրայ նկարուած է 1693^{ին} եղած երկրա-
շարժին դիպուածները : Մէկէ զատ դեռ
49 եկեղեցի , 19 կրօնաւորաց ու 11 ալ
կուսանաց վանքեր կան , և 37 հոգեւոր
եղբայրութեանց տեղուանք : Վենե-
զիկտեանց վանքը խիստ գեղեցիկ ճար-
տարապետութեամբ շինուած է , և մէ-
ջը շատ հնութիւններ կան , բոլոր քա-
ղաքին քովերէն գտնուած . կան նաև
գեղեցիկ պատկերներ , բնական պատ-
մութեան թանգարան մը , հարուստ
գրատուն մը ու գեղեցիկ պարտէզ մը :

Վաղարշապատ զատաստանարանն ալ
փառաւոր շէնքերէն մէկն է . անուանի է
նաև Պիսքարի անունով հարուստի մը
թանգարանը , որուն մէջ խիստ շատ
հնութիւններ կան . նոյն մարդը շինել
տուած է նաև թէատրոնը , քաղաքին
պարիսպը , բաղանիքները , եկեղեցինե-
րէն շատը , ամփիթէատրոն մը բոլորն ալ
լաւայի քարէ . նոյնպէս քանի մը պա-
ղարթի փղեր և եգիպտական բուրգեր :
Մոսկովայի համալսարանն ալ ուր միշտ
աշակերտները 500^{էն} աւելի կը համ-
րուին , 1839^{ին} 800^{էն} հասեր էր անոնց
թիւը :

Մը նոր շէնքերէն զատ հին շէնքե-
րու շատ աւերակներ կան , ջրմուղնե-
րու , բաղնիքներու ու թէատրոններու
և հին տաճարի մը : Մոսկովայի է նաև
աս քաղաքիս Նոյնի անունով բնա-
կան պատմութեան ճեմարանը : Վա-
ղարշապատ վաճառականութիւնը ծովու կող-
մանէ խիստ բանուկ չէ , թէպէտ և
նաւահանգիստը Սիկիլիոյ մեծերէն
մէկն է . հրաբուխէն վազած լաւան

լեցուեր է ծովուն մէջ 60 ոտք բարձրութեամբ, որ հիմայ նաւահանգստին մեծ ամրութիւն է. բայց ծովուն տակը բոլոր լաւան տարածուած ըլլալով՝ յատակը բարձրացած է, որով մեծ նաւեր նաւահանգիստը չեն կրնար մտնել: Վաղաքիս գլխաւոր վաճառքն է բամբակ և մետաքսէ կերպաններ: Վաթանայի քովի երկիրներէն կ'ելլեն, ցորեն, գինի, կտաւ, ձէթ ու մետաքս: Բնակչաց թիւն է 45,000:

Այս հոս դրած պատկերին աջակողմը երեւցած չէ՛նք՝ Վաթանայի բերդն է, որ անցեալ տարի Աիկիլիոյ խռովութեանցը պատճառաւ շատ վտանգեցաւ:

ԾԱՂԿԱՔԱՂ ՀԱՅԿԱԿԱՆ

Բ.

Թագաւորահայ, Փիշ, Երեւան:

ՏԵՍԱՆԷԱՔ զթագաւորական հաւորոյ տեսակն ցանկալի էր, զի ընդ գեղնագոյն փետուրն փոքր ինչ կանաչութիւն համուարխառնեալ արտաքս ճողճայր, և լանջուցն կարմրանիշ գոյն այսր անդր տրոհէր շուրջ զպարանոցաւն առ միմեանս պատուածեալ, և նման գարնանային առաւօտու ցօղոյ կայլակք յանդաստանս զոսկեծայր քսաից մարգարտաձև 'ի վայր կախեալ բոլորովմբ. այսպէս և բիբք աչացն, որ և սոնքաձև կտցոյն փողորտաձգութիւն 'ի վայր կոյս դարձեալ զբերանովքն կռանայր, որում բոլորատէգ զեղոյն ծայր՝ իբրու գնդանաց ցցեալ զբարգաւանգ ճուռողումն ձայնի՝ ըստ մարդկային բնութեանս խօսից ստէպ ստէպ առ բան հոլովէր: Եւ սա զոր օրինակ յառաջինսն անդ՝ Երոնի ումմն կայսեր 'ի սենեակն լինէր գովող, այսպէս 'ի վերջնումն աստ յոգնաբաստիկ իշխանիս մերոյ՝ տեսաւ օրհնիչս:

1. Զուանդերի:

Ինչ որ թէպէտ առաւելաբանչ զարմացա՛ւ սակայն ոչ այնչափ զոր հանդերձեալ եմ'ասել. զի յորժամ կամէր յորս ինչ ելանել կամ 'ի զբօսանս խաղու, տեսանէաք 'ի յելս արքայաչու կազմութեան՝ արտաքոյ պարսպին 'ի նախադրան ճանապարհին որպէս առն թագաւորի յերկրպագութիւն եկեալ՝ անարի, անբարի, անհեգեգ կենդանին վիմահասակն փիղ, որոյ գերանաձև սրբունքն որպէս լեառն ինչ 'ի վեր բարձեալ ունէին, և զխելապատակէ անտի ըստ չարութոյն սողնոյ նմանութեան 'ի վայր կոյս կախեալ՝ ձևանայր պատիճ, զոր առ գետնովն շրջալսելով, այսր անդր ստէպ ստէպ դարձուցանելով, և ուղղորդաձև 'ի վեր կանգնելով, և մերթ յինքն քնթռնեցուցանելով. և նա ուժգնակի մոնչմամբ զտուրեւառութիւն շոնչոյն ընդ խռոչափողն արտաքս հոսելով. արդարեւ ասեմ' թէ իբրեւ բեհմութեան շարժնոյն գլխոյ, ահաբեկ զարհուրումն լինէր զողութեամբ բնութեան մարդոյ:

Տեսանէաք և զերիվարս ածեալ սիգասարք պերճաստորդք, ճեմողք, ճեպողք և ևս ճախրապաղք, որք հողմավար թեթևութեամբ զարշաւանս առնէին, ոսկեսանձ թամբօք, և գեղեղեալ զինուք:

ՄՈՎՍԷՍ ԿԱՂԱՆԿ.

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԱՌՈՂՋՈՒԹԻՒՆ

Սարսուղ-Բիւն:

ԴԺՈՒԱՐԱՄԱՐՍ ուտելեաց մէջ զլխաւորներն են անուշ բաներ, տհաս և թթու պտուղներ, որոնք նոյն օրուան մէջ կերուած ուրիշ բաներն ալ մարսելու շատ նեղութիւն կուտան: Իսկ շատակերութեամբ՝ ինչ և իցէ բանով ալ որ ըլլայ ստամոքսը ծանրացընելը միշտ փնասակար է. վասն զի կամ փխուր կուգայ անմարսողութեամբ կամ սաստիկ ստամոքսի ցաւ, ուսկից նաև ա-